

ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ

(Թուղթ)



Ազնիւ Բարեկամ

Ստացայ ձեր պատուական թուղթը, որոյ մէջ տեղ մի յիշելով իմ վերջին նամակիս մէկ խօսքը, կ'առաջարկէիք ինձ գրել՝ թէ ո՞րք են այն հաւաստի փաստեր, որոց վերայ յեցած՝ կը հակառակիմ՝ ի նմին ոմանց գրաքար և աշխարհաքար բառից վերջին տառը ք գրելուն:

Եթէ կարդացեր էք ի Մոսկուա հրատարակուած Գրական և պատմական հանդիսի երրորդ գրոց մէջ (1890) նշանաւոր Մ. Նալբանդեանի մատենախօսական յօդուածը, տպուած յետ մահուան հեղինակին, — որոյ մէջ ջանացեր է նա ընդհանրապէս՝ Պոռչեանցի (պատահաբար և այլոց) լեզուաբանական ուղիղ կէտերը սրբագրել, — ի հարկէ կարդացեր էք նաև 336 իջի ծանօթութեան մէջ յատկապէս պաշտպանուած գրաքառ և աշխարհաքառը: Տեղեակ չեմ, նոյն յօդուածի և մանաւանդ նոյն ծանօթութեան դէմ խօսող եղած է արդեօք ժամանակին:

Աւելորդ կը համարիմ յիշեցնել թէ հիներն ընդհանրապէս ք տառի կը գրէին. և թէ ր իբր քսան տարի յառաջ սկսեր է երևիլ և նախապատուութիւն ևս ստանալ: Բայց զարմանալի է տեսնել թէ այսօր դեռ կան ռայի թեկնածուներ՝ առանձին գրոց, ազգային լրագրոց, գրացուցակաց մէջ և այլն: Եւ ես առիթ առնելով ձեր առաջարկութիւնը և նոցա ընդհանուրէն չեղիլը, իմ խոնարհ տեսութիւն պիտի պարզեմ այն թղթոյս մէջ, եւ

որովհետեւ ինչ փաստ՝ որ հարկաւոր է ռայի պաշտպանութեան և րէի մերժման համար, Նալբանդեանի յիշեալ ծանօթութեան մէջ կայ ըստ բաւականին, ընտրեցի ուղղակի այնմ պատասխանել, և հետեւաբար ռայի միւս սիրողաց: Այժմ ձեր ունկնդրութիւնը կը խնդրեմ:

Նալբանդեան կ'ըսէ. « Թայտնի է թէ ուղիղ խօսելով՝ չէ կարելի ասել գրաբար, այլ գրաբառ. ուրեմն և աշխարհաբառ՝ և ոչ աշխարհաբար: Շտապումենք այդ պարոններին (որ ա. մէն բան չափումեն հին լեզուի չափով) իմացնել՝ որ գրաբառ կամ աշխարհաբառ խօսքերը չեն բաղկացած գիր և բառ կամ աշխարհ և բառ բառերից. այլ գիր և բարբառ, աշխարհ և բարբառ: Ոչ մի տեղում չենք տեսնում՝ ի գրոց բառ, ի բառ աշխարհիկ, այլ ի գրոց բարբառ կամ ի բարբառ գրոց, ի բարբառ աշխարհիկ կամ յաշխարհիկ բարբառ, որ միանալով (կրճատուել է բարբառ խօսքը և մնացել է միայն բառը, որով և) դարձել է մէկ բառ (ածական) գրաքառ, աշխարհաքառ »:

Բարքառն,՝ որ է լեզու, կը համարուի կրկնութիւն քառ բառին, ըստ որում լեզուն կը կազմուի բառէ և բառէ, այսինքն բառերէ: Այդ ստոյգ է. բայց հարկ է քննել նախ թէ ի՞նչ կը նշա-

1. Պէտք չէ զարմանալ թէ փոխանակ քառաւոր է հոգի է բարբառ. զի այդպիսի զարառութիւնք սովորական են բարբառութեան մէջ, որոց այլ օրինակներ ևս պիտի հանգիպին յետոյ:

նակէ թառն առանձին, և կարէ՛ բար-
դութեանց մէջ թարթառոյ տեղ գոր-
ծածուիլ, և ապա՛ թէ կարէ՛ թարթառն
համառօտուիլ լինել թառ՝ և այնպէս
բարդուիլ:

Առ հասարակ ամէն մատենագիրք՝
սկսեալ հինգերորդ դարէն՝ որ կը գոր-
ծածեն թառը, հին քերականաց հետ
կը հասկանան զայն լոկ այնպէս՝ ինչ-
պէս այժմ մեք և արդի քերականք.
նոյն մտօք կազմուած են նա և բառ-
գիրք կամ բառագիրք, բառակապ,
կիսաբառ և այլն: Միայն Յոհան կթղ-
պատմիչն է ըստ հայկազեան բառգրոյ՝
որ կը գործածէ զայն մի անգամ իբր
բարբառ կամ լեզու. « Յարգ ևս բան
ըստ իւրեանց աղխատորոյզ թառին
պատմի » ¹:

Բայց այդ ի՞նչպէս կարելի է: Բառն
թէ ըստ կազմութեան և թէ ըստ ի-
մաստին՝ անտարակոյս տարբն է թար-
թառոյն. այդպէս ճանաչել և և սղգն
'ի սղգրանէ հետէ: Արդ երբ մէկ գրիչ
մի անգամ՝ ամբողջին իմաստը տարեր
է տուեր, մի՛ թէ կարելի՞ է ըսել՝ թէ
տարբն ամբողջին իմաստն այլ ունի.
տարբ է և միանգամայն ամբողջ. ինչ-
պէս՝ աւագն թէ աւագլինի և թէ քար:
Այդ անշուշտ հակառակ է ուղիղ մտաց:
Երբ թառը, լինելով այդպէս տարբ
լեզուի, մէկ անձէ միայն առաջին և վեր-

ջին անգամ իբր բարբառ գործա-
ծուած կը գտնուի՝ հակառակ ընդհա-
նուրին և հնագունից, որոց անծանօթ
էր այդ երկրորդ իմաստ, — ըստ ո-
րում՝ այնու բնաւ չեն գործածած զայն,
այլ ընդհակառակն միշտ առաջնով, և
նոցա անծանօթ լինել՝ կը նշանակէ բը-
նաւ գոյութիւն չունել, — մեզ կը մնայ
աւարտել մեր խօսքը յայսմ՝ թէ կամ
Յհ. կթ. պատմութեան օրինակողաց
և կամ նոյն ինքն պատմիչն գրչի սխալ
է այն, թարթառոյ մի վանկն անգիտու-
թեամբ դուրս թողուած. կամ թէ
պատմիչն մտաց գիտ: Առաջին մա-
սամբ խօսեմն ինքնին աւելորդ է: Իսկ
երկրորդն այսպէս կարեմք պարգիւ.
սովորական իմաստով թառն իբր մասն՝
գործածուած փոխանակ ամբողջին՝
թարթառոյ, համեմատ ճարտասանու-
թեան մի և նոյն կանոնին, փոխանու-
նութեան. ինչպէս, « ոտքն (իմացի) ր
ամբողջ մարդը) որ թաղեցին զայրն քո
'ի գրան, հանցեն և զքեզ » ², և այլն.
մանաւանդ որ հոմանիշ ևս են թառ և
թառն՝ որ երբեմն լեզուի տեղ այլ գոր-
ծածուած է: Բայց դիտելի է՝ որ թառն
այդու չէ ստացած թարթառոյ իմաստը,
այլ միայն ակնարկած. ինչպէս ռոքն
չհասկացուիր մարդ, այլ միայն կ'ակ-
նարկէ: Եւ թէ մին և թէ միւսն այդ
ակնարկութիւն յիշեալ օրինակաց մէջ
միայն կարող են ընել. և անոնցմէ
դուրս թառն չկարէ առանձին բարբառ
նշանակել, և ոչ ռոքն մարդ ³, ինքն իսկ
Նալբանդեան թառը լեզու. չհասկանար.
« Ոչ մի տեղում, կ'ըսէ, չենք տեսնում՝
'ի գրոց բառ, 'ի բառ աշխարհիկ. այլ
'ի գրոց բարբառ... 'ի բարբառ աշ-
խարհիկ » ⁴:

2. Գործք առաքելոց, Ե. 9.

3. Ինչպէս վերջնոյ մարդ իմաստը չեն ըն-
ծայած բառգիրք, նոյնպէս և առաջնոյն չար-
տէին ընծայել բարբառ իմաստ:

4. Իրաւ է առաջին մասն. բայց մեք նախենաց
մէջ ոչ մի տեղ չեմք տեսել և ոչ « 'ի գրոց բար

1. Նյգլ. բառգիրք օրինակ մի ևս կու տայ
նոյն իմաստին Յաճախապատուէն. « Որպէս տը-
ղաքն՝ որ ոչ գիտեն թառիք զպէսա՛ր մարցն ինա,
մոցն առնուլ, այլ արտասուածք զպիտոյսն իւն-
դրեն » (ԹԺ. 178): Ամէն մարդ գիտէ՝ թէ նո-
րածին մանուկն նախ լայով կը յայտնէ իւր իւն-
դրիքը՝ մինչև Ժամանակ մի: Գիտոյ կը սկսի սոս-
կական թառերով ինդրել, այսինքն միայն իւն-
դրածին անուանը տալ՝ հաց, ջուր և այլն, առանց
խօսք կազմող ուրիշ բառերու: Եւ վերջապէս կա-
տարեալ լեզուաւ: Ահա Յաճախ. կը ներկայացնէ
մանուկը ճիշդ առաջին վիճակի մէջ, յորում դեռ
չէ կարող բառիք յայտնել իւր պէտքը, այլ միայն
լալով: Ինչո՞ւ ուրեմն թառիքը բարբառ հասկա-
նալ է ոչ սովական բառեր:

ՅՆ. կաթողիկոսի բառն (իր բնգու) եթէ չհամարելով գրչի սխալ, ճարտասանորէն մեկնեմք, կը համարձակիմ պնդել՝ թէ չէ կարելի գործածել զայն բարբառոյ տեղ, երբ ուղեմք բարդել գիրը և աշխարհ բառից հետո խնդիրն պարզ է. չբարդուիր այն իմաստով՝ որ իրեն սեպհական չէ. ինչպէս յիշեալ օրինակի ուռք բառն չէ կարող մարդ իմաստիւ բարդուիլ՝ օրինակ. « բազմ ոտն ջաղաք », և հասկացուիլ բազմամարդ. այս տեղ ուռք իւր սեպհական իմաստը եւթ կ'ընծայէ. Զի բառ մի ո՛ր և է իմաստիւ բարդուելու ժամանակ՝ ստիպուած լինելով նոյն բարդութեան մէջ մի և նոյն իմաստը պահել յաւիտեան, չստանձնեւ զայն՝ եթէ իրեն յատուկ չէ. այսինքն այնու բնաւ չբարդուիր. Ըստ այսմ՝ « գրաբառ կամ աշխարհաբառ լեզու » առ առաւելն կը հասկացուի « գրոց կամ աշխարհի բառից լեզու »¹, որ անտեղի է. զի գրոց և ժողովրդեան լեզուները զանազանող՝ բառերն չեն, որք մեծաւ մասամբ նոյն լինելով երկու լեզուաց մէջ, չեն կարող իրենք լինել տեսակաւոր կամ զանազանիչ նոցա. այլ գըլխաւորապէս են հղովմունք, ըծորդութիւնք, բացատրութիւնք և շարադրութեան կարգ կամ եղանակ :

բառ, 'ի բարբառ աշխարհիկ ». որովհետեւ մեր գրականութեան առաջին դարուն դրոց և ժողովրդեան լեզուն մի լինելով, — որպէս դեռ ազատութիւն կայ կարծելու, — զանազան տնոններ չստացան, մինչև իսկ 'յետոյ՝ երբ սկսան զանազանիլ 'ի միմեանց :

1. Թէ այդչափ ևս հասկացուէր. փասն զի կարծե՛ք թէ գրոց կամ աշխարհիկ յատկացուցչին հետ միացած է բառ յատկացեալն՝ եզակի ուղղականաւ, և եղած մի բառ (տես յէջ 230), և 'յետոյ նոյն յատկացեալն յոգնակի սեռական անտեսանելի հղով մի ստանալով՝ օգոյ միջէն, փոխուած յատկացուցիչ հետեւեալ լեզու յատկացուցչին, — ճանդերձ մասն մնալով իւր յատկացուցչին, — այդ եզական և անմասն մեկնութիւն մի կը թուի՝ նոյնպէս անմասն բացատրութեան մի, երկուքն այլ սխալ կամ օտար :

Սակայն ուրախ եմք, զի գրաբառի և աշխարհաբառի պաշտպանք « շտապու մեն իմացնել՝ որ այդ խօսքերը չեն բաղկացած գիր և (յիշեալ) բառ կամ աշխարհ և բառ բառերից. այլ գիր և բարբառ, աշխարհ և բարբառ » : Բայց և այդ բարդութիւն ուղի՞ք է :

Ձե հնար՝ քարքառք համառօտել չինել քառ, և այնպէս բարդել : Առաջին, քառն առանձին լինելով այն՝ ինչ որ այժմ կը հասկանամք, և իւր կրկնութեան մէջ միայն լեզու, որ է քարքառ, կարելի՞ է լատ նալբանդեանի կրճատել զայս վերջինս, այսինքն հանել այն վիճակէն՝ յորում եւթ կարող է լեզու նշանակել, և պահանջել՝ որ դարձեալ նոյն իմաստն ընծայէ՝ յարելով գիր և աշխարհ բառից. ինչպէս տան մի աղիւսները բաժնել 'ի միմեանց, և իւրաքանչիւրը դարձեալ տուն կոչել, որովհետեւ միմեանց հետ միացած ժամանակ տուն կը կազմէին : Այդ ինքնին անտեղութիւն է :

Երկրորդ, մեք չեմք քարքառք այս կամ այն ձևի մէջ առաջին անգամ՝ բարդող այլ բառից հետ. մեր նախնիք ևս բարդեր են զայն, սակայն նորա մեզ չափ արթուն չեն եղեր համառօտելով բարդել : Ահա նոցա բարդածներ. հայա-բարբառ, քաղցրա-բարբառ, մեծա-բարբառ, տեսունա-բարբառ, հեղա-բարբառ, բոնա-բարբառ, ողեղա-բարբառ, համա-բարբառ, բարբառ-ակից, բարբառ-ող, բարբառ-իմ և այլն. և որ աւելին է, մեծա-բարբառ-ագոյն. և սակայն քարքառն ամբողջովին բարդուած է միշտ, և ոչ մի տեղ կրճատուած :

Եսն ինքն ինքեամբ բարդուած այլ ևս բառեր, որք նոյնպէս ողջ բարդուած են այլոց հետ. որպէս, կարկառ՝ վիմա-կարկառ, քարա-կարկառ, կարկառ-ակոյտ, կարկառ-ունն, ա-նեմ, ա-իմ (արմ. կառ-ուցանել)՝ ծոր-ծոր՝ ծործոր-ակ, ծործոր-արդ (արմ. ծոր-ել). հեղ-(հ)եղ՝ զրա-հեղեղ,

ջր-հեղեղ, հեղեղ-արար, հեղեղ-ասաստ (արմ. հեղ-ուլ), և այլն: Սղքա եթէ համառօտութիւն, իմաստն իսկ և իսկ կը փոխուի. ինչպէս՝ կարկառն, որ թէ 'ի պարզութեան և թէ 'ի բարդութեան ընդ այլում' է բլրաձև գէջ քարանց, և բայի վերածուելով՝ կարկառել, է նմանութեամբ ցցումն ձեռին կամ ամբողջ մարմնոյ գէպ 'ի դուրս, կրճատուած՝ կը հասկացուի շինել՝ շինուած. ինչպէս՝ կառ-ուցանել, երկնա-կառ-ոյց, վիմա-կառ-ոյց, կամ մնալ, կպչիլ. օրինակ՝ կառ-չիլ. — ծործորն, որ է ծմակ՝ ձոր, պարզութիւն կը դառնայ հոսիչ կամ հոսած. որպէս՝ արտասուածոր, թարախածոր, քաղցրածոր. — հեղեղ, որ է սաստիկ ջուր, համառօտութիւն կը նշանակէ թափուած կամ թափող. ինչպէս՝ մշտա-հեղ, արինա-հեղ, արտօսրա-հեղ. — ուրիշ բառ մի՝ պէսպէս, որ է զանազան, եթէ կրճատուի՝ պէս, կը լինի նման՝ հանգոյն. բայց եթէ փոխանակ կրկնութեամբ յոգնականին՝ պէս-պէս, այլ կերպով յոգնական չի նեմք՝ պարզը միացնելով թագում բառի հետ, բազմա-պիս-ի՝ Հետեաբար այդ և այդպիսի բարդ բառեր չեն կարող պարզուիլ և առաջին իմաստը պահել:

Ընդհակառակն՝ կան բառեր կամ արմատներ, որոց բարդութիւնն կամ պարզութիւն իմաստի տարբերութիւն յառաջ չեն բերեր, այլ միայն սաստկութեան, և այն ոչ միշտ: Օրինակի համար յիշենք մի քանին. սոր-ել և սորսոր-ել որդանց, յեղ-ուլ և յեղ-յեղ-ուլ զաչս, ան-յեղ և ան-յեղ-յեղ, վազ-ել և վազվազ-ել կաղին, հեծ-ել և հեծհեծ-ել, բաղ-այք և բաղբաղ-այք և այլն: Եւ որ աւելին է, այդպիսեաց բարդեր սովորաբար լոկ պարզութեամբ կը միանան այլ բառից հետ, հակառակ նախորդ կարգի բարդ բառից:

Ուշ գնելով այդ երկու կարգի բա-

ռից, պարզապէս սոյն կանոնս յառաջ կու գայ. Ամէն բառ, որ այլ իմաստ ունի իւր պարզութեան մէջ և այլ բարդութեան մէջ, մին միւսոյն անման, չէ կարելի ուրիշ բառի մի հետ միացնել պարզը փոխանակ բարդին, այսինքն բարդին իմաստով, և բարդը փոխանակ պարզին, այսինքն պարզին իմաստով:

Այս բաժանումն ընելէ վերջ՝ գիւրին է համոզուիլ, թէ չէ կարելի թառառնը պարզել՝ թառ, որք նման առաջին կարգի բառից՝ սովորական և ծանօթ նշանակութեամբ կը զանազանին իսպառ 'ի միմեանց, Բարթառն այնչափ հեռի է թառէ, որ իւր իմաստի մէջ այլ ևս պարզ կը նկատուի և ոչ բարդ, ուստի և ենթակայ չէ երբեք կրճատման կամ պարզման 'ի բարդութիւնս:

Առ առաւելն կարելի էր գոյականաբար բարդել՝ գրաբարբառ, աշխարհաբարբառ, և այլ իբր ածական՝ չըսել «գրաբարբառ կամ աշխարհաբարբառ լեզու»: (Ոչ միայն դժբա, այլ և գրաբառն և աշխարհաբառն՝ եթէ ընդունելի լինէին, երբ իւրեանց յանգնէ թառ՝ կամ թառթառ կրճատուած, գոյական պիտի լինէին՝ և ոչ ածական ըստ Նալբանդեանի և այլոց): Դոյս գոյական լինելու պատճառն այս է. գիրն 'ի բնէ գոյական է, և ածական կը լինի ածանցմամբ միայն, որպէս ան-գիր, գր-աւոր: Արդ ածանցը պարզելով, այսինքն դարձեալ գոյական ընելով, և միացնելով միւս թառառ գոյականի հետ, կը լինի բարդ բառ մի՝ յերկուց գոյականաց, և ինքն այլ գոյական: Չի այդպիսի բարդ միշտ գոյական են՝ յատկացուցչի և յատկացելոյ մտքը. որպէս ջրշեղձ է ջրոյ շեղձ, ժամանակակէտ՝ ժամանակի կէտ, ոտնաձայն՝ ոտին ձայն, ծովեզր՝ ծովու եզր, ուղտերամակ՝ ըզտու երամակ, և այլն. ապա և գրաբարբառ:

1. Սոցա կազմութիւնը պէտք չէ շփոթել նախադասայ բարբառ յոնգած բառերէն «տեառ»

գրոց բարբառ, աշխարհաբարբառ՝ աշխարհի բարբառ :

Որպէս զի անթերի լինի մեր խորհրդածութիւն, հարկ է յաւելուլ ևս : Նախնեաց սովորութեան համեմատ՝ թարթառն և իւր բայն թարթառնը՝ կը նշանակեն կամ գէթ նշանակած են ցարդ ձայն կամ ձայնել մարդոյ (խօսից մէջ), անասնոց և անշունչ՝ այլ ձայնատու կամ հնչական էակաց¹ : և առանձին՝ նա և մարդոց կամ ազգաց գաւառական այլակերպ ձայնները՝ լեզուն (հայ, յոյն, հոռոմ, ասորի) : Ըստ այսմ՝ գիր կամ գիրք՝ (այսինքն տառեր Թուրք միասին խմբուած քարտիսի վերայ, կը նշանակեն կամ կը կազմեն նամակ կամ մատենան), որ ձայն չունի, պիտի չունենար թարթառ : Սակայն նմանութեամբ սոյն յաճախ գործածուած բացատրութեանց՝ « ասն գիրք », « բանք գրոց » և այլն, յորս ասել և թանք լայնաբար կը նշանակեն անձայն առանդել, անձայն խօսք, կարմը ըսել « գրոց բարբառ », կամ « գրաբարբառ » : Միւսն՝ « աշխարհաբարբառ » աւելի բառական ճշդութիւն ունի, իբր աշխարհի (մարդկան) բարբառ : — Նա և փոխանակ բարբառոյն ձայն իմաստին դաշելու « գրոց բարբառ » կամ « գրաբարբառ » նոր բացատրութեամբ, լաւագոյն էր ըսել « հին կամ նախնեաց բարբառ՝ լեզու,

նաբարբառ » ածականի հետ, որոյ ծայրի բարբառն գոյականն է : իբր տեառն բարբառ, այլ արմատն բարբառն բայի : Թարթառնալ ածականնիչ գերբայի մտք, որպէս աստուածաշունչ՝ չէ Առեւծոյ շունչ, այլ Աստուծոյ շնչալ : Բայց մեր յիշած բառերն յայտնապէս կազմուած են թարթառ (կամ նորին սխալ կը ճշտութիւն՝ թառ) գոյական բառէն : Այլ է թէ նոր ընծայեմք նոցա « տեառնաբարբառ » բառի կազմութիւնը : — Իսկ « աշխարհաբարբառ » (կամ... բառ) չէ ըսուել կազմուած (« աշխարհիկ բարբառ ») խօսքէ, այլ (« աշխարհի բարբառ ») ըստ լիշեակ օրինակաց :

1. Տես նոյն բառից գործածութիւնը նախնեաց և բառգրոց մէջ :

Նախնի կամ հին հայերէն » և այլն. և սորա նմանելու համար, « աշխարհաբարբառի » տեղ ըսել « արդի՝ նոր՝ ռամկական բարբառ կամ լեզու, նոր՝ արդի հայերէն » և այլն. որով և գրոց, որ քարտիսի վերայ անձայն նշաններ են և ունին լոկ միտք կամ իմաստ, ի գուր տուած չեմք լինի բարբառ՝ այսինքն ձայն :

Նախնեղեան կ'ըսէ ևս. « Ածական անունը երբեմն վարվումէ որպէս մակբայ, ինչպէս նա և գրաբառ և աշխարհաբառ խօսքերը. գրաբառ խօսել, աշխարհաբառ գրել » : Առաջին մասն ստոյգ է. բայց ոչ երկրորդն, երբ գրաբառ և աշխարհաբառ սոսկ գոյականներ կարէին լինել եթէ լինէին : Թողլով այդ անճիշդ բառերը, կարելի են սոյն բացատրութիւնք, « ի գրաբարբառ կամ գրաբարբառի խօսել. յաշխարհաբարբառ կամ աշխարհաբարբառի գրել », որ է՝ գրոց կամ աշխարհի բարբառով, կամ ըստ նոր լեզուին՝ միայն գործիական հոլովի :

Եթէ նախնեղեան թարթառը համատեղելու՝ բարդելու գիր և աշխարհաբառից հետ, և զայն ո'ր մտք գործածելու կէտերը խորշած չլինէր « չափել հին լեզուի չափով », անշուշտնա աւելի ուղղատես կը լինէր : Դուք թէ կ'ողջէք « չափեցէք, կ'ըսէ նա մեզ. բայց այնպէս արէք՝ որ նոյն իսկ հին լեզուին չհակառակէք » : Բայց մեք տեսանք՝ թէ ո՞վ կը հակառակի հին լեզուին :

Արդ եթէ սխալ է գրել՝ գրաբառ և աշխարհաբառ, յայտնի է՝ թէ պէտք է գրել գրաթար և աշխարհաթար մակբայերը իբր ածական :

Սոցա առաջին փաստն այն է՝ որ նոյն իսկ նախնեաց մէջ կան և հին են, ուր ա յանգաժներն նոր շինուած են : Այլա՝ եթէ ռայի գրելն սխալ է, հետեաբար կը մնայ յէլի գրել, իրաւ է թէ նախնիք յանգաժները գրական և ժողովրդական լեզուաց չեն բնծայած իբր ածական, այլ ուրիշ գիր-

քով և մակբայօրէն. բայց ո՞վ կը հա-
կառակի՝ թէ չեմք կարող ո՛ր և է ա-
ծական կամ մակբայ ածականօրէն
գործածել ո՛ր և է գոյականի հետ՝ երբ
յարմար է. որպէս այստեղ գրաբարը
և աշխարհաբարը « լեզուի » հետ :

Բայց Նալբանդեան կ'ըսէ. « Բուն
մակբայը կամ մակբայի սեփական
վերջաւորութեամբ (բար) բաղա-
դրուած մակբայը չէ վարվում որպէս
ածական ¹ : Նոյն այս հին լեզուի կա-
նոնով էլ սխալ է աշխարհաբար ասե-
լը՝ աշխարհաբառ ասելու տեղ » :

Եթէ աշխարհաբարն մակբայ է,
հարկ էր՝ որ փոխանակ իսպառ « սխալ »
համարելով՝ գէթ վերոյիշեալ խօսելը
կամ գրելը բայերու հետ գործածէր
զայն, որ աւելի յարմար էր, քան թէ
իւր ածական կարծած աշխարհաբարը
մակբայօրէն գործածել. զի և նախնիք
գործածեր են նոյնն իբր մակբայ :

« Մակբայը չէ վարվում որպէս ա-
ծական » : Կ'երևի՝ թէ Նալբանդեան
առիթ չէ ունեցեր կարգալ կամ լսել
'ի նախնեաց « Զիշխանաբար զյա-
րութիւնդ, զիշխանաբար զօրութիւնն,
աստուածաբար ներգործութեամբ,
զմոլեգնոտաբար գոչումն » և այլ օրի-
նակաց մէջ մակբայից ածականաբար
գործածութիւնը. և ոչ միայն բար

յանգածներուն, այլ միւս բոլորին,
որոց լիովին օրինակներ կու տայ Բագ-
րատունին Զարգ. քերականին 1309
և 1310 կանոնաց մէջ : — Ուրեմն
գրաբարն և աշխարհաբար օրինաւոր
են իբր ածական ևս գործածուիլ լեզու
բառին հետ, նշանակելով « ըստ գրոց,
կամ ըստ աշխարհի » լեզու. զի մակ-
բայից բար վերջաւորութիւնն ըստ
նախագրի կամ հարկանաւ բառի զօ-
րութիւնն ունի : Բայց սխալ է՝ նոյն
ածականաբար վարեալ մակբայերը,
որք նոսկ « լեզուի » հետ գործածելի
չեն, ուստի և առանձինն ոչ մի իր չեն
նշանակեր, միայնակ գործածել՝ ա-
ռանց « լեզուի » : սա գէթ մասն յի-
շուած պիտի լիներ, որպէս զի կարե-
նան սորա ածականն համարուիլ : Եւս
աւելի սխալ է վերջահոյով հոլովել
զնոյնս, « գրաբարի՝ աշխարհաբարի
մէջ, գրաբարով՝ աշխարհաբարով » և
այլն. զի մակբայից բար յանգն ան-
փոփոխ է :

Դարձեալ օրինաւոր են « գրաբար »
և « աշխարհաբարն » գործածուիլ
« խօսք », « խօսել », « բարբառել » և
այլ ո՛ր և է բառից հետ՝ որք « լեզուի »
իմաստն ունին : Բայց « գիրք »,
« գրել », « նամակ », « քերթուած »,
« ոտանաւոր » և այլ նման բառից հետ
գործածուելով, չեն կարող նշանակել՝
գրք. կամ աշխրհք : լեզուաւ գիրք,
գրել, նամակ և այլն. և հետեաբար
այսպիսի բացատրութիւնք անճիշդ են.
այլ յայտնապէս պէտք է ըսել՝ գրք.
կամ աշխրհ. լեզուաւ. գիրք և այլն :

Ահա, բարեկամ, իմ բաւական կամ
անբաւական տեսութիւն :

1. Այս վերջին խօսք՝ կարծես՝ չհամաձայնիր
քանի մի տող յառաջ ըսածին. « Հին լեզուի բար
մասնիկը մակբայացուցիչ է, և աշխարհաբարը
մակբայ՝ և ոչ լուի ածական առու » . ուր « ոչ
լուի » մեր հասկացողութեան համեմատ կը նշա-
նակէ՝ թէ աշխարհաբարն միայն մակբայ կամ
ածական չէ, այլ երկուքն ևս :

